

Հավելված

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 20-- թվականի -----ի N°---Ա
որոշմամբ

**«-----» ----- ընկերության կողմից էլեկտրական
էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված
գործունեություն իրականացնելու**

Պայմանները

**(Լիցենզիա LE N°0---- տրված Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20--
թվականի -----ի N°----Ա որոշմամբ)**

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

- 1) **Անուղղակի հարկեր՝** ավելացված արժեքի հարկը.
- 2) **Էլեկտրական էներգիայի սակագին՝** Լիցենզիայի պայմանների N°1 հավելվածի համաձայն՝ Լիցենզավորված անձի համար միադրույք սակագնային համակարգում սահմանված՝ առաքված էլեկտրական էներգիայի սակագինը.
- 3) **Լիցենզավորված անձ՝** «-----» ----- ընկերություն.
- 4) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանը կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության)

արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

- 5) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- 6) **Հաշվարկային ժամկետ՝** Ներկայացման ամսին հաջորդող տասներկու շարունակական ամիսներից բաղկացած ժամանակահատված
- 7) **Ներկայացման ամիս՝** համապատասխան Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման համար Հանձնաժողովի որոշման նախագիծը Հանձնաժողովի նիստին ներկայացնելու օրացուցային ամիսը.
- 8) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթը, որով կանոնակարգվում են էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, բնագավառի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.
- 9) **Պաշտոնական փոխարժեք՝** Որոշակի ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ հայկական դրամով արտահայտված մեկ ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքի մեծությունը.
- 10) **Սղաճ՝** Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից որոշակի ժամանակահատվածի համար հրապարակված սպառողական գների ինդեքսն է.
- 11) **Ֆորս մաժոր՝** ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Լիցենզիայով ամրագրված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝
 - 1) չի գտնվում Լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

- 2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
- 3) Տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 օրվա ընթացքում:

Լիցենզիայի իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

- 1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.
- 2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումներ, զինված հակամարտություններ, արտաքին թշնամու գործողություններ կամ շրջափակում, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.
- 3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել Լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 20-- թվականի -----ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 20-- թվականի -----ը, որից՝

1) մինչև 20-- թվականի -----ը կառուցման ժամանակահատվածն է [մինչև 2 տարվա տևողություն ունեցող ժամանակահատված],

2) մինչև 20-- թվականի -----ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը [20 տարվա տևողություն ունեցող ժամանակահատված]:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքն է:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել [մուտքագրել Հայտով Առաջարկված Ծրագրի Դրվածքային Հզորության մեծությունը] ՄՎտ դրվածքային հզորությամբ «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանը (այսուհետ՝

Կայան), արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ԿԱՅԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Կայանում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը իրականացնելու նպատակով նախատեսվում է տեղակայել ----- հատ ----- կՎտ հզորությամբ -----:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը նախապես դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

10. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել կամ այլ կերպ փոխանցել մեկ այլ անձի:

11. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

12. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

13. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

14. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

15. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

18. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

19. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

20. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

21. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետ սահմանված չէ:

23. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև -----ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ բաշխման ցանցին էլեկտրական էներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

24. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

26. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը՝ Լիցենզիայի N¹ հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

27. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնել այդ մասով Կայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

28. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին:

29. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

30. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական

եզրակացությունն ստանալուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձնաժողով, ինչպես նաև հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների <http://www.azdarar.am> պաշտոնական ինտերնետային կայքում:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

31. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

32. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

33. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

34. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

35. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) օրենքով սահմանված տուգանքներ.
- 3) Լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

36. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

37. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե Լիցենզիայում ամրագրված պարտավորության խախտումը հետևանք է Ֆորս մաժորի:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

38. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

39. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում, հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Հավելված №1

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
20__ թվականի _____ի __-ի №__Ա որոշմամբ
հաստատված լիցենզիայի պայմանների

ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

1. Սույն հավելվածը սահմանում է յուրաքանչյուր Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկը:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություն կատարելու դեպքում, որը Լիցենզավորված անձի համար կառաջացնի սույն լիցենզիայի պայմաններով սահմանված գործունեությանն առնչվող ծախսերի ավելացում կամ նվազեցում՝ որևէ Հաշվարկային ժամկետում ____ մլն կամ երկու և ավելի Հաշվարկային ժամկետների համար աճողական ____ մլն (առանց հաշվի առնելու նախկինում փոխհատուցված մեծությունը) դրամ և ավելի չափով, ապա սույն հավելվածի 5-րդ կետում նշված T_B մեծությունը պետք է ճշգրտվի այնպես, որ Լիցենզավորված անձը պահպանի նույն ֆինանսական վիճակը, որը կունենար Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության բացակայության դեպքում:
3. Սույն հավելվածի համաձայն՝ էլեկտրական էներգիայի սակագինը հաշվարկվում է տարեկան կտրվածքով էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ Հանձնաժողովի առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 20 տարվա ընթացքում:
4. Էլեկտրակայանի կառուցման ավարտից հետո Հանձնաժողովը Լիցենզավորված անձի հայտի հիման վրա սահմանում է հաշվարկային առաջին ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագինը համաձայն հետևյալ բանաձևի.

$$T_1 = T_B * E_0$$

որտեղ՝

T_1 -ն հաշվարկային առաջին ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ),

T_B -ն Կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման համար կազմակերպված մրցույթի արդյունքում ձևավորված՝ Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն է, որը հավասար է ____ ԱՄՆ դոլար/կՎտժ,

E_0 -ն Հաշվարկային առաջին ժամկետի համար սակագնի սահմանման նպատակով Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովին հայտի ներկայացման ամսվան նախորդող ամսվա պաշտոնական փոխարժեքի ամսական միջին թվաբանականն է (<< դրամ/ԱՄՆ դոլար):

5. Հաշվարկային երկրորդ ժամկետից սկսած Հանձնաժողովը էլեկտրական էներգիայի սակագինը հաշվարկում և սահմանում է՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$T_i = T_B * E_i + \Delta T_i * (1 + d) ,,$$

որտեղ՝

T_i -ն i -րդ Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ),

E_i -ն Պաշտոնական փոխարժեքի ամսական միջին թվաբանականն է՝ i -րդ Հաշվարկային ժամկետի Ներկայացման ամսվան նախորդող ամսվա համար (<< դրամ/ԱՄՆ դոլար):

ΔT_i -ն i -րդ Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման մեծությունն է (դրամ/կՎտժ), որը պայմանավորված է նախորդ « $i-1$ » Հաշվարկային ժամկետի ընթացքում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ և Սղաճով:

d -ն լրացուցիչ ճշգրտման գործակիցն է, որը հավասար է 0.12,

6. Սկսած երկրորդ Հաշվարկային ժամկետից կատարվում է էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտում՝ պայմանավորված նախորդ Հաշվարկային ժամկետում

Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ և Սղաճով: Ճշգրտման ընդհանուր մեծությունը (ΔT_i) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta T_i = T_{i-1}(K_1 * (KE_i - 1) + K_2 * (KI_i - 1)),$$

որտեղ՝

T_{i-1} -ն «i-1»-րդ Հաշվարկային ժամկետի համար էլեկտրական էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ): Հաշվարկային 2-րդ ժամկետի համար T_{i-1} -ն հավասար է հաշվարկային առաջին ժամկետի էլեկտրական էներգիայի սակագնին:

K_1 -ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0.9-ի,

KE_i -ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է, որը հաշվարկվում է սույն հավելվածի 7-րդ կետի համաձայն,

K_2 -ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման Սղաճով և ընդունվում է հավասար 0.1-ի,

KI_i -ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Սղաճով պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է, որը հաշվարկվում է սույն հավելվածի 9-րդ կետի համաձայն:

7. Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցը (**KE_i**) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KE_i = \frac{\sum_{j=1}^{j=12} \left(W_j^{i-1} * \frac{E_j^{i-1}}{E_{i-1}} \right)}{\sum_{j=1}^{j=12} W_j^{i-1}}$$

որտեղ՝

KE_i -ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Պաշտոնական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է,

W_j^{i-1} -ն i-1-րդ Հաշվարկային ժամկետում j-րդ օրացուցային ամսվա ընթացքում Լիցենզավորված անձի կողմից առաքված Էլեկտրական Էներգիայի քանակն է (կՎտժ),

E_j^{i-1} -ն i-1-րդ Հաշվարկային ժամկետում j-րդ օրացուցային ամսվա համար հաշվարկված Պաշտոնական փոխարժեքի միջին թվաբանականն է (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար),

E_{i-1} -ն i-1-րդ Հաշվարկային ժամկետի Ներկայացման ամսվան նախորդող օրացուցային ամսվա համար հաշվարկված Պաշտոնական փոխարժեքի միջին թվաբանականն է (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար):

8. Սղաճով պայմանավորված Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցը (KI_i) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KI_i = \frac{I_i}{100}$$

որտեղ՝

KI_i -ն i-րդ Հաշվարկային ժամկետի համար i-1-րդ Հաշվարկային ժամկետում Սղաճով պայմանավորված Էլեկտրական Էներգիայի սակագնի ճշգրտման գործակիցն է

II-ը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող Ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա Սղաճն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ:

9. Սույն հավելվածում նշված Էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկները չեն ներառում Անուղղակի հարկերը: